

բազմեալ, պսակեալ եւ փառաւորեալ¹ : Ունի ներ-
ինքեան եւ զգանձն երկնային, զգլուխ առաջին
բաժակարբու մարտիրոսին եւ սիրելի աշակերտին
Քրիստոսի² : Ընդ նմին եւ զսուրբ մարմին Արդարոյն
Յակոբայ, որք են պայծառ լուսատուք ընդհանրա-
ժաւալ եկեղեցւոյն Քրիստոսի եւ լուսաւորիչք
կրկին գոյութեանց մերոց³ : Եւ մանաւանդ նա-
խախնամիչք զուգակի կենաց մերոց . յաջ եւ յա-
հեակ քարոզիչք փառացն Յիսուսի, որոց չէ բաւ-
ական բան գովեստից մարմնեղէն շրթանց : Զի թէ
անմարմինք ցանկան հանդիսի սոցին, լեզու նիւ-
թական զհարգ կարիցէ վստահապէս անդր հպիլ :

Բայց արդ եկ եւ լուր զլուրս զարմանալիս,
զի այսպիսեաց երանելեաց, քրիստոսամբձ գա-
հակալաց գահըն եւ աթոռապահաց յարկն, այս-
ինքն՝ վերոյիշեալ պարծանաց տեղին ամենից,
Տաճար Սրբոյն Յակոբայ, գեղեցիկն եւ փառաւորն,
այնքան վշտօք անշքացեալ եւ ցաւօք լցեալ եղեւ՝
ի ձեռաց կողոպտիչ, արծաթասէր մերայնոց եւ
սուտանուն քրիստոնէից, մեռեալ հաւատս ունողաց,
մինչ զի անհամեմատ գտաւ այլոց ցաւալեաց . զի
որք հարինն զնա ագահութեանն ախտիւ, ոչ կա-
մեցան թէ մասն առողջութեան կայցէ ի նմա⁴ :

1 Ս. Յակոբայ Տաճարին արեւմտեան կողմը կը բռնեն
Ս. Խաչը եւ Յովհաննէս Մկրտչին առաջադր եւ այսպէս ամէն
կողմէ սրբավայրերու մէջ, ինքն Ս. Յակոբ, իբր շափուղայ
վեհաշուք կը բարձրանայ :

2 Բաժակարբու մարտիրոս կ'անուանէ Յակոբոս Զե-
բեթեանը, որ իր Եղբօր Յովհաննէսին հետ, յանձն առին
խմել Քրիստոսին բաժակը՝ Անոր աջն ու ձախը գրաւելու
համար (Մտթ. Ի. Մրկ. Ժ.) :

3 Ըսինք արդէն թէ Արդարն Յակոբ, Տեառնեղբայր
կոչուածն է :

4 Վշտակրութեան խորունկ եւ անկեղծ արտայայ-
տութիւն մ'է, որով Վոլոտ կը դիտէ իրերը եւ կը դատէ :
Ինքը՝ որ հոգեւորապէս ներշնչուած է Ս. Տեղերէն, կը
ցաւի թէ ինչու իրեն պէս կամ գոնէ իբր զպայուն քրիս-